ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏՍԱՌԸՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1991-2000 թթ.) *

ՀՏԴ 327 *DOI: 10.52063/25792652-2023.2.17-51*

ԱՐՄԻՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության
ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
armine.alaverdyan@ysu.am
ORCID: 0009-0001-6651-7833

Սառը պատերազմի ավարտով և Խորհրդային Միության փլուզմամբ միջազգային հարաբերությունների համակարգը թևակոխեց ձևավորման և զարգացման նոր շրջափուլ, իսկ ԱՄՆ-ն՝ որպես գերտերություն, կանգնեց արտաքին քաղաքականության նոր ռազմավարության ու հայեցակարգերի մշակման և գործարկման խնդրի առաջ:

Սույն հոդվածի նպատակն է հետազոտել և բազմակողմանիորեն ներկայացնել հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում (հատկապես՝ 1991-2000 թթ.) ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմնական առանձնահատկությունները:

Հոդվածի նպատակի իրագործման համար խնդիր է դրվել համապարփակ ուսումնասիրության ենթարկել Սառը պատերազմից հետո միջազգային հարաբերությունների համակարգում պաշտոնական Վաշինգտոնի որդեգրած արտաքին քաղաքականության ռազմավարության առանցքային բնորոշիչներն ու գործոնները՝ մանրամասնորեն հետազոտելով հետսառըպատերազմյան ժամանակաշրջանի ԱՄՆ առաջին նախագահ Բիլ Քլինթոնի արտաքին քաղաքական դիրքորոշումներն ու մոտեցումները:

Հետազոտությունը կատարվել է որակական, ինդուկտիվ, վերլուծական մեթոդների համադրմամբ՝ իրականացվել է պետական-ռազմավարական փաստթղթերի, պայմանագրերի, քաղաքական հայտարարությունների ու ելույթների կոնտենտ վերլուծություն:

Հիմնավորվել է, որ Սառը պատերազմի ավարտով և Խորհրդային միության փլուզմամբ պաշտոնական Վաշինգտոնի արտաքին քաղաքականությունը ենթարկվեց առանցքային փոփոխությունների՝ ԱՄՆ-ն միջազգային

* Հոդվածը ներկայացվել է 17.04.2023թ., գրախոսվել՝ 02.06.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2023թ.:

հարաբերությունների համակարգում սկսեց գործել արտաքին քաղաքական տնտեսակենտրոն ռազմավարությամբ՝ որդեգրելով նոր նպատակներ ու սկզբունքներ՝ համապատասխան ժամանակի պահանջներին ու պայմաններին:

Եզրակացությունն այն է, որ Սառը պատերազմի ավարտը և Խորհրդային Միության փլուզումը հանգեցրին ԱՄՆ արտաքին քաղաքականության վերաձևավորման՝ տնտեսական գործոնը, ի փոխարեն ռազմական գործոնի, պաշտոնական Վաշինգտոնի արտաքին քաղաքական ռազմավարության մշակման ու սահմանման գործընթացներում զբաղեցրեց առաջատար դիրքեր՝ ձեռք բերելով անմրցելի նշանակություն ու կարևորություն: Սպիտակ տան ներկայացուցիչները, զուգորդելով տնտեսական, քաղաքական ու անվտանգային նպատակները, հարաբերական չեզոքության ու միջամտողականության համատեքստում, միջազգային հարաբերությունների համակարգում շարունակեցին ավանդաբար գործել պաշտոնական Վաշինգտոնի արտաքին քաղաքական տեսանելի շահերի, հետաքրքրությունների ու մտահոգությունների առկայության պայմաններում:

Հիմնաբառեր՝ *Սառը պատերազմ, ԽՍՀՄ, արտաքին քաղաքականություն, ժողովրդավարություն, գլոբալիզացիա, տնտեսություն, ինտերվենցիոնիցմ:*

Մուտք

Միջազգային հարաբերությունների համակարգում ԱՄՆ-ԽՍՀՄ սառըպատերազմյան հարաբերությունները կարելի է բնորոշել որպես բարդ, բազմաշերտ և երկարատև հակասությունների ու հակադրությունների շարունակական գործընթաց, որի ավարտը նշանավորվեց 1991 թվականին Խորհրդային Միության փլուզմամբ և միջազգային հարաբերությունների համակարգում նորանկախ պետությունների ի հայտ գալով. այս իրադարձությունների անմիջական ազդեցությունների ներքո համաշխարհային քաղաքականությունը թևակոխեց զարգացման նոր շրջափուլ: Սառը պատերազմի ավարտը և Խորհրդային միության փլուզումը, միասնաբար ընկալվելով որպես միջազգային հարաբերությունների համակարգում տեղի ունեցող աննախադեպ իրադարձություններ, ձևավորեցին արտաքին քաղաքական հնարավորությունների, խնդիրների ու մարտահրավերների համապարփակ շրջանակ, որտեղ միջազգային խաղացողները որդեգրեցին ռազմավարական տարբեր մոտեցումներ ու դիրքորոշումներ, ուստի վկայակոչվեցին ինչպես միաբևեռ աշխարհակարգի հաստատման, այնպես էլ տնտեսական գործոնի՝ ռազմական գործոնին փոխարինելու և համաշխարհային քաղաքականության կենտրոնական հենասյուն դառնալու հավանականությունները (Boys 1-22) :

Սառը պատերազմի ավարտով և Խորհրդային Միության փլուզումամբ միջազգային հարաբերությունների համակարգում Միացյալ Նահանգները՝ որպես գերտերություն, մնաց միայնակ՝ առանց գլխավոր հակառակորդ Խորհրդային Միության: Այս համատեքստում պաշտոնական Վաշինգտոնն ստիպված եղավ մեկնարկել արտաքին քաղաքական ռազմավարությունների ու հայցեկարգերի վերադիտարկման ու վերամշակման գործընթացներ. եթե Սառը պատերազմի տարիներին ԱՄՆ-ն իր արտաքին քաղաքականությունը ձևավորում էր կոմունիզմի դեմ պայքարի՝ ԽՍՀՄ-ի հետ հակամարտությունում հնարավոր բոլոր միջոցներով հաղթանակի հասնելու գաղափարի շուրջ, ապա հետսառըպատերազմյան ժամանակաշրջանը դարձավ առավել խրթին: Նախագահներ Ջորջ Հ. Վ. Բուշի և հետագայում Բ. Քլինթոնի վարչակազմերը փորձեցին գործադրել հնարավոր բոլոր միջոցները բազմավեկտոր արտաքին քաղաքական դաշտում ճշգրիտ կողմնորոշվելու և առավելագույն արդյունքներ գրանցելու համար. պաշտոնական Վաշինգտոնը

կանգնեց մեկուսացման ու գլոբալիզացիայի, միջամտողականության ու չեզոքության հատման կետում:

Նախագահներ Ջ. Հ. Վ. Բուշի և Բ. Քլինթոնի դիրքորոշումներն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նոր սկզբունքների վերաբերյալ

«Ի վերջո, մեր անվտանգությունն ապահովելու և կայուն խաղաղություն հաստատելու լավագույն ռազմավարությունը այլոց ժողովրդավարության առաջխաղացմանն աջակցելն է: Ժողովրդավարական երկրները չեն հարձակվում միմյանց վրա» (Clinton - Inaugural Address):
Բ. Քլինթոն

Սառը պատերազմի ավարտի և Խորհրդային միության փլուզման ժամանակաշարջանում ԱՄՆ նախագահի պաշտոնը զբաղեցնում էր Ջորջ Հ. Վ. Բուշը (1989-1993 թթ.)՝ քաղաքական գործիչ, որ ուներ Երկրորդ համաշխարհային պատերազմի անմիջական փորձն ու ներքին և արտաքին քաղաքական ոլորտների վերաբերյալ հմտությունների ու գիտելիքների մեծ պաշար: Համաձայն ամերիկացի պատմաբան Ռոնալդ Է. Պովասկիի՝ Ջորջ Բուշը չափավոր պահպանողական նախագահ էր, անհատ, որ փորձում էր խուսափել արմատական փոփոխություններից՝ ապավինելով կայունությանն ու զգուշավորությանը (Powaski 16): Նախագահի այսօրինակ բնութագիրը պաշտոնավարման առաջին իսկ օրերից դրսևորած վարքագծի արդյունք էր: Սկզբից ևեթ կենտրոնանալով հատկապես արտաքին քաղաքականության վրա՝ Ջորջ Բուշը փորձում էր հանդես գալ որպես պրագմատիկ գործիչ՝ օժտված ռեալ գաղափարներով ու մտքերով:

Սառը պատերազմի ավարտը և Խորհրդային միության փլուզումը՝ որպես միջազգային հարաբերությունների համակարգում գլոբալ փոփոխությունների առանցքային պատճառներ, լուրջ մարտահրավերներ դարձան նախագահ Ջորջ Բուշի համար՝ վերջինս փաստացիորեն պետք է ստանձներ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում պաշտոնական Վաշինգտոնի առջև ծառացած բազմաբնույթ խնդիրների լուծման ու հաղթահարման գործընթացների պատասխանատվությունը՝ մշակելով և գործի դնելով աշխարհաքաղաքական նոր իրողություններին ու պայմաններին համապատասխան ռազմավարական ծրագրեր ու հայեցակարգեր:

Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում ԱՄՆ արտաքին քաղաքականության վերաբերյալ նախագահ Ջորջ Բուշի դիրքորոշումներն ու մոտեցումները միասնաբար ձևավորվեցին այսպես կոչված «Նոր աշխարհակարգի» (New world order) գաղափարի շուրջ: Սառը պատերազմի ավարտից և Խորհրդային միության փլուզումից հետո նախագահը կարծես թե տեսնում էր նոր աշխարհակարգի կառուցման շոշափելի հեռանկարներ ու նախադրյալներ՝ միտված միջազգային խաղացողների միջև ազատության, անվտանգության և հավասարության հաստատմանն ու ամրապնդմանը (Cameron 16): 1991 թվականի օգոստոսին ընդունված ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթում նախագահ Ջորջ Բուշը հստակ նշում էր, որ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանը ԱՄՆ-ին ընձեռել է ամերիկյան արժեքներին ու գաղափարներին համապատասխան միջազգային նոր համակարգ կառուցելու հնարավորություն, որտեղ պաշտոնական Վաշինգտոնը պետք է զբաղեցնի առաջնորդի իր դիրքերը՝ սեփական երկրի շահերն ու հետաքրքրությունները բավարարելուն զուգընթաց՝ պատրաստ միջազգային այլ խաղացողների հետ համագործակցության և գործընկերության (National Security Strategy of the United States 5):

Նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացում, ըստ նախագահ Ջորջ Բուշի հրապարակային ելույթների և ընդունված ռազմավարական փաստաթղթերի, միջազգային սուբյեկտների միջև գործընկերային հարաբերություններն ստացան

առանցքային նշանակություն: Այս հարաբերությունները, ձևավորվելով ծախսերի ու պարտավորությունների հավասարաչափ բաշխմամբ և օրենքի գերակայությամբ, ենթադրվում էր, որ պետք է նպաստեին ժողովրդավարության ու ժողովրդավարական արժեքների տարածմանը, խաղաղության հաստատմանը և միջազգային հարաբերությունների համակարգում սպառազինությունների մրցավազքի դադարեցմանը: Նախագահ Ջորջ Բուշը, չնայած ԱՄՆ-ի քաղաքական, ռազմական ու տնտեսական հնարավորությունների գերակայությանը, հակված էր այսօրինակ հարաբերությունների հաստատմանը: Նոր աշխարհակարգի կառուցման գործընթացը պահանջում էր օժանդակ ուժեր և զգալի ռեսուրսներ, որոնք պետք է ձեռք բերվեին միջազգային կառույցների, տարածաշրջանների ու պետությունների հետ համագործակցությունների և համատեղ աշխատանքների արդյունքում:

Ջորջ Բուշի «Նոր աշխարհակարգի» գաղափարը բավական խոստումնալից էր, և ակնկալվում էր, որ պետք է ունենար սպառիչ պատասխաններ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանի մի շարք հրատապ հարցերի համար՝ «Արդյոք ԱՄՆ-ն պետք է շարունակի՞ համաշխարհային շերիֆի դերը: Ինչպիսի՞ չափանիշներ պետք է սահմանվեն միջազգային հարցերին միջամտելու համար: Որքա՞ն ռեսուրսներ պետք է հատկացվեն արտաքին քաղաքական գործերին: Ինչպե՞ս պետք է ձևավորվեն միջպետական հարաբերությունները...»: Նախագահ Ջորջ Բուշի համար այս հարցերին տեսականորեն պատասխանելը բավական հեշտ էր, բարդ էր գործնականում դրանց իրագործումը՝ անհրաժեշտ էին ռեսուրսներ, ժամանակ և, իհարկե, արդյունավետ գործիքակազմ:

Սառը պատերազմի ավարտից և Խորհրդային միության փլուզումից հետո ԱՄՆ-ի դերի և առաքելության վերաբերյալ նախագահ Ջորջ Բուշի դիրքորոշումը հստակ էր՝ ԱՄՆ-ն շարունակելու էր աջակցել միջազգային հարաբերությունների համակարգի անմիջական մասնակիցներին իրենց քաղաքական, տնտեսական և ռազմական խնդիրների հաղթահարման ու արտաքին ռիսկերի նվազեցման գործընթացներում՝ նպաստելով համընդհանուր կայունության և խաղաղության հաստատմանը: Այսուհանդերձ, Ջորջ Բուշը մերժում էր ԱՄՆ-ի՝ որպես համաշխարհային շերիֆի կամ ոստիկանի դերի անհրաժեշտությունը՝ համոզված լինելով, որ պաշտոնական Վաշինգտոնը պետք է պարզապես զբաղեցնի առաջնորդի իր տեղը՝ առաջին հերթին պատասխանատվություն կրելով սեփական երկրի արտաքին քաղաքական նպատակների ու մտահոգությունների համար (Cameron 16): Կարելի է ասել, որ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում, Ջորջ Բուշը միջազգային իրադարձությունների ու գործընթացների նկատմամբ մեծ հետաքրքրություն դրսևորելուն և գործընկերներին ու դաշնակիցներին օգնելու պատրաստակամություն հայտնելուն առընթեր, արտաքին քաղաքական դաշտում հակվել էր զգուշավոր և հարաբերականորեն չեզոք մարտավարության: Նախագահը գործնական քայլեր իրականացնելիս նախընտրում էր չհատել ամերիկյան շահերի ու նախասիրությունների շրջանակը՝ ցանկացած դեպքում փնտրելով կայունության, խաղաղության և անվտանգության երաշխիքներ:

Նախագահ Ջորջ Բուշի «Նոր աշխարհակարգի» գաղափարը հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում փաստացիորեն դարձավ սկզբնաղբյուր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վերաբերյալ առաջին համապարփակ մոտեցումների ու դիրքորոշումների համար: Գաղափարն առերևույթ տեսականորեն լավ թրծված ու բազմակողմանիորեն ձևավորված էր, այնուամենայնիվ, օբյեկտիվորեն պետք է ասել, որ այն չկարողացավ արդյունավետորեն ծառայել Ջորջ Բուշի քաղաքական շահերին ու նպատակներին: Այս է վկայում ԱՄՆ 42-րդ նախագահական ընտրություններում վերջինիս պարտությունը, որի արդյունքում ստիպված եղավ իր տեղը զիջել Դեմոկրատական կուսակցության թեկնածու, համեմատաբար սկսնակ քաղաքական գործիչ Բիլ Քլինթոնին:

1993 թվականի հունվարի 20-ին Բիլ Քլինթոնը պաշտոնապես ստանձնեց ԱՄՆ նախագահի պարտականությունները: Պաշտոնավարման առաջին իսկ օրերից նախագահն ակնհայտորեն ցույց տվեց իր առանձնահատուկ ուշադրությունը ներքին քաղաքականության նկատմամբ: Լծվելով ներպետական խնդիրների հաղթահարման գործընթացին՝ վերջինս փորձեց անմիջապես անցում կատարել նախընտրական քարոզարշավի ժամանակ տրված խոստումների կատարմանը՝ նոր աշխատատեղերի ստեղծում, հանցագործությունների դեմ պայքար, աղքատության մակարդակի նվազեցում (Powaski 59-60):

Բիլ Քլինթոնի վարչակազմի քաղաքական օրակարգի առաջնային հարցերը հիմնականում վերաբերում էին ամերիկյան տնտեսության վերականգնմանը, համաշխարհային տնտեսության մեջ ԱՄՆ-ի առաջատար դերի հաստատմանը, զարգացող երկրներին տրամադրվող օգնությանը և, իհարկե, ժողովրդավարությանն ու ժողովրդավարական արժեքների տարածմանն ու հաստատմանն այլ պետություններում: Ցավոք սրտի, վերոնշյալ խնդիրներից զատ Սպիտակ տան ներկայացուցիչները ստիպված էին նաև հաղթահարել հետսառըպատերազմյան ժամանակաշրջանին բնորոշ այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք էին՝ էթնիկ հակամարտությունները, զանգվածային ոչնչացման զենքերի առկայությունը, թմրանյութերի ու հանցագործությունների տարածումը (Cameron 19): Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում պաշտոնական Վաշինգտոնի առջև ծառացած այսօրինակ խնդիրների լուծումը և իր տնտեսական նպատակների իրագործումը նախագահ Բիլ Քլինթոնը տեսնում էր ներքին և արտաքին քաղաքական օրակարգերի մեկտեղման մեջ: Վերջինս հավատում էր, որ ներքին և արտաքին քաղաքականությունների միավորումը կարող է նպաստել սեփական պետության շահերի ու հետաքրքրությունների բավարարմանը: Նախագահի այս մոտեցումը պատմաբան Ջեյմս Բոյսը բնութագրում է որպես հեղափոխական քայլ, որը սարսափեցնում էր հատկապես նրանց, ովքեր հավատարիմ էին դասական-ավանդական ուժային քաղաքականությանը (Boys 282): Փաստացիորեն, պաշտոնական Վաշինգտոնը, որը տասնամյակներ տևած Սառը պատերազմի ողջ ընթացքում իր քաղաքականությունը ձևավորել էր ռազմական գործոնի անմիջական ազդեցության ներքո, այժմ անցում էր կատարում տնտեսահեն քաղաքականության՝ առանց ներքին և արտաքին ոլորտների տարանջատման:

Չնայած Բիլ Քլինթոնը նախընտրում էր զբաղվել ներքին քաղաքականությամբ և, ինչպես նշում են ոլորտի մասնագետներն ու ներկայացուցիչները, մեծ հետաքրքրություն չէր ցուցաբերում միջազգային հարցերի նկատմամբ, այնուամենայնիվ, արտաքին քաղաքականության ռազմավարության սահմանումը դարձել էր ժամանակի հրամայական: Նախագահը Սառը պատերազմի ավարտի և Խորհրդային միության փլուզման պայմաններում ստիպված էր մշակել արտաքին քաղաքականության հստակ ռազմավարություն՝ գործելով համաշխահային իրադարձություններին ու գործընթացներին համապատասխան (Hua 1):

1993 թվականին՝ նախագահական երդմնակալության ժամանակ, Բիլ Քլինթոնի հրապարակային ելույթի արդյունքում ուրվագծվեցին պաշտոնական Վաշինգտոնի արտաքին քաղաքականության վերաբերյալ վերջինիս առաջնային մտադրություններն ու դիրքորոշումները: Նախագահը խոստացավ սահմանել արտաքին քաղաքականության նոր ուղենիշներ՝ համապատասխան նոր աշխարհին՝ հստակորեն նշելով, *որ «Ամերիկայի վերականգման համար պետք է բախվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մարտահրավերների, և այլևս չկա տարանջում դրանց միջև: Համաշխարհային տնտեսությունը, շրջակա միջավայրը, ՁԻԱՀ-ի ճգնաժամը, սպառազինությունների մրցավազքն ազդեցություն են ունենում բոլորի վրա: Այսօր, երբ անցնում են հին կարգերը, նոր աշխարհն ավելի ազատ է, բայց պակաս կայուն: Կոմունիզմի փլուզումը առաջ է բերել հին թշնամություններ և նոր վտանգներ:*

Ակնհայտ է, որ Ամերիկան պետք է շարունակի առաջնորդել աշխարհը, որի համար այդքան շատ բան է արվել» (Clinton - Inaugural Address [January 20, 1993],):

Բիլ Քլինթոնի վարչակազմն ԱՄՆ-ի արտաքին քաղաքական ռազմավարական ծրագրերն ու հայեցակարգերը ձևավորելիս հիմնվում էր երկու առանցքային կետերի վրա՝ տնտեսական հզորության խթանում ու խաղաղության հաստատում ազատ առևտրի ու ժողովրդավարական արժեքների տարածման միջոցով: Նախագահն ԱՄՆ-ն նույնացնում էր խոշոր առևտրային ընկերության հետ, որը պայքարում էր համաշխարհային շուկայում իր տեղը գտնելու համար (Cameron 16): Պաշտոնական Վաշինգտոնի այս պայաքարում Բիլ Քլինթոնը փորձում էր հմտորեն զուգորդել տնտեսական և քաղաքական շահերը՝ համոզված լինելով, որ խաղաղության հասնելու միակ ճանապարհը ժողովրդավարության տարածմանը նպաստելն ու ժողովրդավարական երկրներին սատարելն է (Clinton - Inaugural Address): Նախագահի համար ակնհայտ էր, որ պաշտոնական Վաշինգտոնն իր տնտեսական նպատակների ու ծրագրերի իրագործման ճանապարհը անխոչընդոտ կարող էր անցնել միայն միջազգային հարաբերությունների համակարգում համընդհանուր կայունության ու խաղաղության երաշխիքների առկայության պայմաններում, ուստի պատահական չէ, որ վերջինս շարունակաբար իր աջակցությունն էր հայտնում բոլոր այն մայրցամաքներին, որոնք «կառուցում էին» ժողովրդավարություն և ազատություն (Dittmer 421-459): Ինչ վերաբերում է պաշտոնական Վաշինգտոնին սպառնացող վտանգներին՝ ապա այս դեպքում նախագահ Բիլ Քլինթոնը պատրաստ էր գործադրելու ինչպես խաղաղ դիվանագիտության, այնպես էլ ուժի կիրառման միջոցները (Clinton - Inaugural Address [January 20, 1993],)*:*

Այսպիսով, նախագահ Բիլ Քլինթոնը, հաջորդելով Ջորջ Հ. Վ. Բուշին, եկավ շարունակելու պաշտոնական Վաշիգտոնի առջև ծառացած հետսառըպատերազման ժամանակաշրջանի մարտահրավերների ու խնդիրների լուծման գործընթացը: Նախագահները, չնայած հայեցակարգային որոշ տարբերությունների, կարելի է ասել, գործեցին միանման՝ Ջորջ Հ. Վ. Բուշն իր «Նոր աշխարհակարգի» գաղափարով և Բիլ Քլինթոնն իր տնտեսակենտրոն արտաքին քաղաքականությամբ միջազգային հարաբերությունների համակարգում փորձեցին որդեգրել զգուշավոր և հարաբերականորեն չեզոք ռազմավարություն՝ առաջնորդվելով սեփական պետության ազգային, անվտանագային շահերով ու արտաքին քաղաքական հետաքրքրություններով:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը՝ որպես տնտեսական և քաղաքական շահերի համագումար

Սառը պատերազմի ավարտից և Խորհրդային միության փլուզումից հետո Բիլ Քլինթոնը, զբաղեցնելով ԱՄՆ նախագահի պաշտոնը, դարձավ միջազգային հարաբերությունների համակարգում պաշտոնական Վաշինգտոնի արտաքին քաղաքականության թիվ մեկ պատասխանատուն ու հեղինակը: Նախագահն արտաքին քաղաքական դաշտում իր աշխատանքը մեկնարկեց ռազմավարական նոր հայեցակարգերի և ծրագրերի գործարկմամբ՝ կարևորելով ինչպես տնտեսական և քաղաքական շահերի համաժամանակյա բավարարման, այնպես էլ ժողովրդավարական արժեքների ու սկզբունքների պահպանման հանգամանքները: Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում ԱՄՆ արտաքին քաղաքականության վերաբերյալ նախագահ Բիլ Քլինթոնի մոտեցումներն ու դիրքորոշումները միջազգային հարաբերությունների գիտահետազոտական տիրույթում միասնաբար հայտնի դարձան «***Ընդլայնման դոկտրին» (Doctrine of Enlargement)*** կամ ***«Ներգրավվում և ընդլայնում» (Engagement and Enlargement)*** անվանումներով:

Նախագահ Բիլ Քլինթոնի Ընդլայնման քաղաքականությունը կարելի է բնորոշել որպես ամբողջական համակարգ, որտեղ գործողություններն ու իրադարձությունները հիմնականում կատարվում էին տնտեսական և քաղաքական գործոնների յուրօրինակ

զուգադրմամբ: Այս քաղաքականության հիմնական նպատակներն ԱՄՆ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Էնթընի Լեյքը ներկայացնում է 4 հաջորդական քայլերի տեսքով՝

1. շուկայական ժողովրդավարական համայանքների հզորացում,
2. ժողովրդավարական նոր պետություններին ու տնտեսություններին օգնության հատկացում (հատկապես այն տարածաշրջաններում, որոնք ունեն հատուկ նշանակություն և հնարավորություններ),
3. ժողովրդավարական երկրների ու տնտեսությունների դեմ ուղղված ագրեսիայի կանխարգելում,
4. ժողովրդավարություններին ու շուկայակական տնտեսություններին աջակցության տրամադրում տարածաշրջաններում արմատավորվելու գործընթացում (Lake 5-6):

Արտաքին քաղաքականության դաշտում, ինչպես տեսանելի է, նախագահ Ջորջ Բուշի վարչակազմը գործում էր՝ առաջնորդվելով ժողովրդավարությանը կամ, այլ կերպ ասված, շուկայական ժողովրդավարությանն առնչվող իր շահերով ու հետաքրքրություններով՝ փորձելով կայուն ակտիվություն պահպանել ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային ու ենթատարածաշրջանային հարթություններում:

Պաշտոնական Վաշինգտոնի արտաքին քաղաքականության մեջ տնտեսության առաջնային դերի մասին էր վկայում նաև 1993 թվականին Բիլ Քլինթոնի վարչակազմի կողմից Ազգային տնտեսական խորհրդի (National Economic Council) ձևավորումը: Ազգային տնտեսական խորհրդի հիմնական խնդիրն ԱՄՆ նախագահին համաշխարհային տնտեսական քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն տալն էր, ըստ այսմ՝ Կառույցն ուներ **չորս** հիմնական գործառույթ՝

- համակարգել միջազգային և ներքին տնտեսական խնդիրների վերաբերյալ հստակ քաղաքականության ձևավորման ընթացքը,
- նախագահին խորհուրդներ տալ տնտեսական քաղաքականության վերաբերյալ,
- երաշխավորել քաղաքական ծրագրերի ու որոշումների համապատասխանելիությունը նախագահի տնտեսական նպատակներին,
- վերահսկել նախագահի տնտեսական քաղաքականության օրակարգային հարցերի լուծման գործընթացները (National Economic Council):

Ազգային տնտեսական խորհուրդը, պատասխանատվություն կրելով ներքին և արտաքին տնտեսական քաղաքականությունների համար, դարձավ միջազգային հարաբերությունների համակարգում պաշտոնական Վաշինգտոնի ռազմավարական ծրագրերի ու նպատակների իրագործման անկյունաքարային օղակներից մեկը՝ հակակշռելով Սառը պատերազմի ողջ ընթացքում կարևորագույն մարմին հանդիսացող Ազգային անվտանգության խորհրդին (National Security Council):

Չնայած տնտեսակենտրոն կողմնորոշման՝ նախագահ Բիլ Քլինթոնը ներքին և արտաքին քաղաքական ոլորտներում տնտեսությունից բացի մեծ հետաքրքրություն էր դրսևորում նաև ժողովրդավարության ու ժողովրդավարական արժեքներին վերաբերող խնդիրների և իրադարձությունների նկատմամբ: Նախագահն ԱՄՆ-ի շուկայական ցանկությունների ու կարիքների բավարարման գործընթացներն անմիջականորեն կապում էր ժողովրդավարության և ժողովրադավարական արժեքների ամրապնդման ու տարածման հետ՝ համոզված լինելով, որ միջազգային հարաբերությունների համակարգում ժողովրդավարացման բարձր ցուցիչը համընդհանուր կայունության ու խաղաղության հաստատումից զատ կնպաստի նաև ամերիկյան տնտեսության զարգացմանն ու երկրի անվտանգային երաշխիքների ապահովվմանը: Այս համատեքստում ժողովրդավարական երկրները դիտարկվում էին որպես վստահելի գործընկերներ: Նրանք չէին պատերազմում միմյանց դեմ, չէին սատարում ահաբեկչական կառույցներին և տեսանելի աշխատանքներ էին իրականացնում մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ (Lake 4-5):

Մարդկանց հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության և երաշխավորման գործընթացներին վերաբերող հարցերում պաշտոնական Վաշինգտոնը ընտրել էր **ինտերվենցիոնիզմի** (միջամտողականություն) ճանապարհը: Համաձայն նախագահ Բիլ Քլինթոնի՝ ԱՄՆ-ն պատրաստ էր քայլեր ձեռնարկել կանխելու խաղաղ քաղաքացիական բնակչության դեմ ուղղված բռնի գործողությունները՝ անկախ դրանց իրականացման դրդապատճառներից ու նպատակներից (Remarks to Kosovo International Security Force Troops in Skopje): Սակայն, արտաքին քաղաքական դաշտում Սպիտակ տան ներկայացուցիչները գործում էին ընտրողաբար՝ հիմնականում միջամտելով այն գործընթացներին ու իրադարձություններին, որոնք որևէ կերպ աղերսվում էին ԱՄՆ-ի ազգային շահերին. Բիլ Քլինթոնը վստահաբար պնդում էր, որ *«ԱՄՆ-ն չի կարող ու չպետք է լինի ամենուր և անի ամեն ինչ: Պետք է պարզապես հիշել, որ արտաքին քաղաքականության գլխավոր մարտահրավերը խնդիրների հաղթահարումն է, նախքան դրանք կհասցնեն վնասել ազգային շահերին»* (Remarks by the President on Foreign Policy): Ասվածից ենթադրվում է, որ Բիլ Քլինթոնը միջազգային ասպարեզում պատրաստ էր գործնական որոշումների միայն այն իրողություններում, որտեղ առկա էին պաշտոնական Վաշինգտոնին անհանգստացնող ակնհայտ վտանգներ կամ ամերիկյան հետաքրքրություններից բխող հեռանկարային հնարավորություններ: Միջազգային հարաբերությունների համակարգում նախագահի այսօրինակ դիրքավորումը տրամաբանորեն միտված էր պետական միջոցների նպատակային օգտագործմանն ու արտաքին սպառնալիքների չեզոքացմանը:

Չնայած արտաքին քաղաքական դաշտում Բիլ Քլինթոնի որդեգրած ռազմավարությունը թվում էր ճկուն և բազմավեկտոր, այնուամենայնիվ, այն զերծ չէր մնում քննադատություններից: Ըստ որոշ քաղաքական գործիչների և ոլորտային մասնագետների՝ նախագահը չուներ հստակ դիրքորոշում միջազգային հարաբերությունների համակարգի այնպիսի հրատապ հարցերի վերաբերյալ, ինչպիսիք էին, օրինակ, Սոմալիում, Բոսնիայում, Իրաքում, Հյուսիսային Կորեայում, Ռուանդայում, Հաիթիում ծագած խնդիրները (Gill 2): Համաձայն Բիլ Քլինթոնի՝ ԱՄՆ-ն պայքարում էր միջուկային զենքի տարածման, ահաբեկչական կազմակերպությունների ստեղծման ու ակտիվացման դեմ, աշխատաքներ էր իրականացնում ժողովրդավարության ամրապնդման, ժողովրդավար պետությունների կայունացման, տնտեսության զարգացման ուղղություններով, ուստի կարելի է ենթադրել, որ այս գործողությունները, կրելով համընդհանուր բնույթ, պետք է նպաստեին հետսառըպատերազմյան ժամանակաշրջանի բազմաթիվ մարտահրավերների հաղթահարմանը՝ անմիջականորեն ազդելով նաև վերոնշյալ աշխարհագրական տարածքներում տեղի ունեցող իրադարձությունների վրա (A National Security Strategy of Engagement and Enlargement):

Խոսելով Բիլ Քլինթոնի պաշտոնավարման տարիներին ԱՄՆ արտաքին քաղաքականության առանձնահատկությունների մասին՝ պետք է նկատել, որ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում միջազգային հարաբերությունների համակարգում բազմաբնույթ վայրիվերումները, ուժերի վերադասավորման, խաղացողների տեղերի և դերերի վերաբաշխման գործընթացները, նոր հակառակորդները, տարբեր տարածաշրջաններում ու ենթատարածաշրջաններում ֆինանսական, ռազմական ու քաղաքական ճգնաժամերը ժամանակ առ ժամանակ նախագահին «ստիպել են» վերանայել արդեն իսկ որդեգրած դիրքորոշումներն ու ռազմավարությունները՝ ենթադրելով մարտավարական ու հայեցակարգային փոփոխություններ: Այս համատեքստում կարելի է, օրինակ, հիշատակել Ասիական տարածաշրջանը, որտեղ տեղի ունեցող իրադարձությունները «պահանջում էին» նախագահ Բիլ Քլինթոնի համապատասխան արձագանքն ու գործողությունները: 1997 թվականին տարածաշրջանում բռնկված ֆինանսական ճգնաժամն սկսվեց Թաիլանդից՝ հասնելով մինչև Մալայզիա, Ֆիլիպիններ, Ինդոնեզիա, Հարավային

Կորեա և Ճապոնիա. այն արտաքին ներդրումների հետևանքով գների սրընթաց աճի, ապա՝ ակնթարթային անկման արդյունք էր: Բիլ Քինթոնի վարչակազմը քննադատվում էր ճգնաժամի լրջությունը խորությամբ չգիտակցելու և անհրաժեշտ քայլեր չձեռնարկելու մեջ: Այնուամենայնիվ, նախագահը գիտակցում էր, որ եթե ձախողեր տարածաշրջանի սուբսիդավորման գործընթացը, ապա ասիական ֆինանսական ճգնաժամը կարող էր ընդլայնել իր սահմանները՝ կրելով համաշխարհային բնույթ: Բարեբախտաբար, ճգնաժամը կարճատև էր, և արդեն 1999 թվականին տարածաշրջանային բազմաթիվ պետություններ սկսեցին ընթանալ տնտեսության վերականգնման ճանապարհով: Սակայն, Բիլ Քլինթոնի վարչակազմին ուղղված քննադատությունները չդադարեցին: Շրջանառվում էր այն տեսակետը, ըստ որի՝ պաշտոնական Վաշինգտոնի հապաղումները նպաստել էին ասիական երկրներում ֆինանսական խնդիրների բարդացմանն ու խորացմանը (Powaski 83-84): Ասիական ճգնաժամը, անշուշտ, բացասական հետևանքներ ունեցավ Բիլ Քլինթոնի շուկաների ազատականացման և ազատ առևտրային գոտիներ ստեղծելու ծրագրերի վրա: Սա միջազգային հարաբերությունների համակարգում տեղի ունեցող այն հազարավոր իրադարձություններից մեկն էր, որին անդրադարձ կատարվեց. այս և մի շարք այլ մեծ ու փոքր մաշտաբներ ունեցող դեպքերի ներքո ԱՄՆ արտաքին քաղաքականության վերաբերյալ Բիլ Քլինթոնի որդեգրած ռազմավարությունը ենթարկվեց աստիճանական փոփոխությունների՝ ներկայանալով առավել ռեալ և իրատեսական գաղափարներով:

Նախագահ Բիլ Քինթոնի պաշտոնավարման տարիների և այդ ժամանակաշրջանում պաշտոնական Վաշինգտոնի արտաքին քաղաքականության էվոլուցիայի մասին է «Քլինթոնի մեծ ռազմավարությունը. ԱՄՆ արտաքին քաղաքականությունը հետսառըպատերազմյան աշխարհում» վերնագիրը կրող համապարփակ աշխատությունը: Այստեղ հեղինակը՝ բրիտանացի ակադեմիական գործիչ և մեդիա խորհրդատու Ջեյմս դը Բոյսը, վկայում է, որ ԱՄՆ արտաքին քաղաքականությունում իդեալիզմը ժամանակի ընթացքում զիջել է իր դիրքերը, և Բիլ Քլինթոնի ռազմավարությունը ձեռք է բերել ռեալիզմին բնորոշ ավելի շատ տարրեր ու հատկություններ (Boys 270-271): Չնայած Սպիտակ տան կողմից ներկայացված ռազմավարական փաստաթուղթերը հաստատում էին, որ ԱՄՆ-ն միջազգային հարաբերությունների համակարգում շարունակում էր ընթանալ գլոբալիզացիայի ճանապարհով՝ փորձելով ստանձնել անվտանգային վստահելի գործընկերոջ դերը հատկապես այն երկրների համար, որոնց հետ ուներ ընդհանուր շահեր և հետաքրքրություններ, այնուամենայնիվ, համաձայն Ջեյմս դը Բոյսի՝ պաշտոնական Վաշինգտոնը, ընդհանուր առմամբ, նախապատվությունը տալիս էր միակողմանի գործողություններին՝ համոզված լինելով, որ ժողովրդավարությունն ու տնտեսական զարգացումը կարող են արմատավորվել միայն պայքարող հասարակություններում՝ լոկալ լուծումների և գործողությունների միջոցով (Boys 272): Ակներևաբար, ԱՄՆ-ն գլոբալ գործընթացներում որդեգրում էր «մեկ քայլ հետ» սկզբունքը՝ միջազգային հարաբերությունների համակարգի նախընտրելի սյուբեկտների հետ հարաբերությունների ամրապնդման ու ընդլայնման ուղղություններով աշխատանքներ տանելուն զուգընթաց, երկրորդային նշանակության տարածաշրջաններում ու ենթատարածաշրջաններում տեղի ունեցող իրադաձություններում հաճախ առաջնորդվելով չմիջամտողականության **(Non-interventionism)** և չեզոքության սկզբունքներով:

Արդեն 1999 թվականին պաշտոնական Վաշինգտոնն իր ազգային, անվտանագային շահերը հստակորեն բաժանում էր երեք խմբերի՝ դրանք մանրամասնորեն ներկայացնելով «Ազգային անվտանգության ռազմավարություն Նոր դարի համար» ռազմավարական փաստաթղթում՝

1. կենսական շահեր (vital interests), որոնք կապված էին ԱՄՆ-ի և դաշնակիցների տարածքների ու քաղաքացիների անվտանգության, տնտեսական

բարեկեցության, հատուկ նշանակության ենթակառուցվածքների պաշտպանության հետ,

2. կարևոր շահեր (important interests), որոնք առնչվում էին տարածաշրջաններին, որտեղ ԱՄՆ-ն ուներ տնտեսական օգուտներ, դաշնակիցների նկատմամբ պաշտոնական Վաշինգտոնի ստանձնած պարտավորություններին և այն գործողություններին, որոնք միտված էին ընդհանուր միջավայրի պաշտպանությանը,
3. հումանիտար կամ այլ շահեր (humanitarian and other interests), որոնք պահանջում էին համարժեք գործողություններ մարդու իրավունքների պաշտպանության, բնական և մարդածին աղետների հետևանքների վերացման ու կանխարգելման, հակամարտությունների բռնկման, տարածման, ժողովրդավարացման գործընթացների և այլ ուղղություններով (A National Security Strategy for a New Century 1-3):

Վերոնշյալ շահերի բավարարման համատեքստում Բիլ Քլինթոնի վարչակազմը միջազգային հարաբերությունների համակարգում ստիպված էր պահապանել հարաբերական ակտիվություն ու ներգրավվածություն՝ զսպված և չեզոք արտաքին քաղաքականության շրջանակում գործելով քաղաքական, դիվանագիտական, ռազմական և տնտեսական լծակների ու ռեսուրսների ընձեռած հնարավորությունների օգնությամբ:

2000 թվականի դեկտեմբերին պաշտոնական Վաշինգտոնը հրատարկեց «Ազգային անվտանգության ռազմավարություն Նոր դարաշարջանի համար» վերնագիրը կրող վերջին ռազմավարական փաստաթուղը մինչև 2001 թվականի ահակբեկչական գործողությունները: Այստեղ Բիլ Քլինթոնը ևս մեկ անգամ վերահաստատում էր իր նախկին դիրքորոշումները՝ ընդգծելով, որ Ամերիկան այժմ ձեռք է բերել այնպիսի ուժ և հեղինակություն, որը նախկինում չի ունեցել, ուստի պետք է շարունակեր օգտագործել այն՝ համագործակցելով նրանց հետ, ովքեր կիսում են ամերիկյան շահերն ու գաղափարները (National Security Policy for a Global Age 4):

Եվ ուրեմն, Բիլ Քլինթոնի նախագահությամբ պաշտոնական Վաշիգտոնն անցավ արտաքին քաղաքականության տնտեսակենտրոն ռազմավարության: Չնայած միջազգային հարաբերությունների համակարգում Բիլ Քլինթոնի վարչակազմի գործողություններն ու որոշումները հիմնականում ձևավորվեցին տնտեսական գործոնի ներքո, նախագահը, այնուամենայնիվ, փորձեց զուգորդել տնտեսական, քաղաքական ու անվտանգային շահերը՝ աստիճանաբար հանդես գալով առավել ռեալ և իրատեսական գաղափարներով: Բիլ Քլինթոնի նախագահության տարիներին պաշտոնական Վաշինգտոնը թվացյալ միջամտողականության և հարաբերական չեզոքության հատույթում շարունակեց ջանասիրաբար աշխատել սառըպատերազմյան ժամանակաշրջանի իր դիրքերի և ազդեցության գոտիների պահպանման ու ընդլայնման ուղղություններով:

Միջազգային գործընկերների, շահերի ու հիմնախնդիրների ընկալումը ԱՄՆ-ում Բ. Քլինթոնի նախագահության շրջանում

Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում ԱՄՆ արտաքին քաղաքականության վերաբերյալ Բիլ Քլինթոնի որդեգրած ռամավարությունը սահմանում էր երեք առաջնային նպատակ՝ անվտանգության ապահովում, տնտեսության զարգացում և ժողովրդավարության ամրապնդում ու ընդլայնում: Այս նպատակների իրագործման ճանապարհը պաշտոնական Վաշինգտոնը բնականաբար միայնակ անցնել անկարող էր: Անհրաժեշտ էր դաշնակիցների ու գործընկերների աջակցությունը, ուստի հարաբերությունների և համագործակցությունների հաստատման գործընթացում նախագահ Բիլ Քլինթոնը նախապատվությունը տալիս էր միջազգային հարաբերությունների համակարգի այն սյուբեկտներին, որոնց հետ ուներ ընդհանուր շահեր ու գաղափարներ:

Բիլ Քլինթոնի պաշտոնավարման տարիներին միջազգային հարաբերությունների համակարգի խաղացողների շարքում պաշտոնական Վաշինգտոնի համար իր առանձնահատուկ տեղն ուներ Եվրոպան: Այն դիտարկվում էր որպես տնտեսական ու քաղաքական վստահելի գործընկեր, որի հետ ԱՄՆ-ն սահմանում էր ռազմավարական հստակ նպատակներ: Նախագահ Բիլ Քլինթոնը ցանկանում էր նպաստել ինտեգրված, խաղաղ ու ժողովրդավար Եվրոպայի կառուցմանը, հաստատել համագործակցային հարաբերություններ, որոնք կօգնեն հասնել համաշխարհային խնդիրների լուծմանը, զարգացնել Խորհրդային Միության փլուզումից հետո ստեղծված հնարավորությունները՝ նվազեցնելով ռիսկերի ու սպառնալիքների հավանականությունը (National Security Policy for a Global Age 20-21): Ուժեղ և անվտանգ Եվրոպան վկայում էր միջազգային հարաբերությունների համակարգում հուսալի գործընկերոջ մասին, որը պաշտոնական Վաշինգտոնին կարող էր աջակցել արտաքին քաղաքական շահերի բավարարման ու խնդիրների լուծման գործընթացներում: Եվրոպայի հետ շահավետ, կայուն զարգացող հարաբերությունների գրավականը տարածաշրջանի անվտանգությունն էր՝ այստեղ նախագահ Բիլ Քլինթոնը նախապատվությունը տալիս էր Հյուսիսատլանտյան դաշինքին՝ հակված համատեղ որոշումների ընդունմանն ու գործողությունների իրականացմանը: Նախագահը փորձում էր նաև նպաստել Դաշինքի ընդլայնմանը՝ խրախուսելով և աջակցելով նոր պետությունների անդամակցությանը (Gill 2):

Խորհրդային Միության փլուզումից և Սառը պատերազմի ավարտից հետո միջուկային զենքի նկատմամբ վերահսկողության հարաբերական կորստի և նախկին միութենական երկրների կողմից դրանց պահպանման ու ցանկության դեպքում կիրառման սպառնալիքներից ելնելով՝ Բիլ Քլինթոնի վարչակազմը սկսեց ինտենսիվորեն աշխատել նաև սպառազինությունների վերահսկման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ու գործածման կանխարգելման ուղղություններով՝ լծվելով տարբեր պայմանավորվածությունների ձեռքբերման ու պայմանագրերի կնքման գործընթացներին: Վերոնշյալ խնդրները իրենց առանցքայնությամբ և հրատապությամբ պաշտոնական Վաշինգտոնին «դրդեցին» համագործակցության պաշտոնական Մոսկվայի հետ: Երկու պետությունները, մեկտեղելով ընդհանուր մտահոգություններն ու ջանքերը, ստորագրեցին մի շարք պայմանագրեր ու համաձայնագրեր, օրինակ՝ 2000 թվականի հունիսի 4-ին Մոսկվայում ստորագրվեցին «Ռազմավարական կայնության սկզբունքների համատեղ հայտարարության» փաստաթուղթը, որը վերահաստատում էր զանգվածային ոչնչացման զենքերի դեմ պայքարի անհրաժեշտությունը, և «Բալիստիկ հրթիռների արձակման վերաբերյալ վաղ նախազգուշացման տվյալների փոխանակման համատեղ կենտրոն ստեղծելու մասին» համաձայնագիրը, որը պետք է նվազեցներ կեղծ նախազգուշացումների և պատահականությունների հավանականությունը՝ միաժամանակ նպաստելով կողմերի միջև փոխվստահության ամրապնդմանը (Joint Statement on Principles of Strategic Stability; Joint Warning Centre for the Exchange of Information on Missile Launches and Early Warning): Դեռևս 1994 թվականին ուժի մեջ էր մտել նաև 1991 թվականին Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության միջև ստորագրված Ռազմավարական սպառազինությունների կրճատման մասին համաձայնագիրը (Strategic Arms Reduction Treaty (START I)), որը գործնական հիմքեր էր ստեղծել միջուկային զենքի կրճատման և միջազգային հարաբերությունների համակարգում ռազմական լարվածության թուլացման համար: 1992 թվականի մայիսի 23-ին ստորագրված Լիսաբոնի արձանագրությամբ նախկին միութենական երկրներ Ղազախստանը, Բելառուսը և Ուկրաինան միացան START I-ին. ԽՍՀՄ փլուզումից հետո այս պետություններն ունեին մեծ թվով մարտավարական ու մարտադաշտային միջուկային զինատեսակներ, որոնք, անշուշտ, անվտանգային լուրջ սպառնալիք էին (The Lisbon Protocol At a Glance): Չնայած գործընթացային խոչընդոտներին, որոնք հիմնականում կապված էին Ուկրաինայի հետ, Միացյալ Նահանգներն ու

Ռուսաստանը փաստաթղթի շրջանակում կարողացան շոշափելի արդյունքներ գրանցել՝ հասնելով միջուկային զենքի թվաքանակի նվազեցմանն ու միութենական երկրների կողմից դրանց նկատմամբ վերահսկողության սահմանափակմանը:

Ինչպես տեսանելի է, Բիլ Քլինթոնը միջազգային հարաբերությունների համակարգում բազմավեկտոր արտաքին քաղաքականության կողմնակից էր: Նախագահն աշխատանքներ էր տանում ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ու անվտանգային խնդիրների ուղղություններով, սակայն քննադատությունների թիրախում հայտնվելուց խուսափելն անհնար էր: Ոլորտային մասնագետների ու գործիչների մի մասը հաճախ պնդում էր, որ շատ դեպքերում նախագահը միջամտում էր տարբեր տարածաշրջաններում ու ենթատարածաշրջաններում տեղի ունեցող այնպիսի գործընթացների, որոնք պաշտոնական Վաշինգտոնի արտաքին քաղաքական օրակարգից դուրս էին, մյուս մասը վերջինիս մեղադրում էր հապաղումների ու ժամանակավրեպ գործողություններ իրականացնելու մեջ, որոնք հանգեցնում էին անդառնալի հետևանքների: Այս թվում հարկ է հիշատակել 1994 թվականին Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանությունը (Hua 1-7): Ռուանդայում զանգվածային սպանությունների արդյունքում զոհվեց շուրջ 800.000 մարդ՝ հիմնականում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ՝ թութսիներ, հազարավոր մարդիկ լքեցին երկիրը (Rwandan Genocide): Արդյունքում պաշտոնական Վաշինգտոնը մեղադրվեց ինչպես գործնական քայլեր չիրականացնելու, այնպես էլ խաղաղ քաղաքացիական բնակչության դեմ ուղղված բռնի գործողությունները չկանխելու մեջ: Ռուանդայում ԱՄՆ-ն կենսական շահեր չէր հետապնդում, ուստի պաշտոնական Վաշինգտոնը գործեց ընտրողաբար՝ առանց համարժեք գործողություններ իրականացնելու:

Այսպիսով, Բիլ Քլինթոնը, չնայած արտաքին քաղաքական նոր մոտեցումներին ու դիրքորոշումներին, շարունակեց հավատարիմ մնալ պաշտոնական Վաշինգտոնի դաշնակցային ու գործընկերային նախասիրություններին: Նախագահը, կարևորելով սեփական պետության խաղաղությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը, հակված էր համագործակցության միջազգային հարաբերությունների համակարգի լիիրավ սյուբեկտների հետ, իսկ ինչ վերաբերում է գործնական քայլերին, ապա դրանք նախընտրում էր ձեռնարկել միայն խիստ անհրաժեշտության դեպքում՝ պայմանավորված տեսանելի շահերով կամ մտահոգիչ խնդիրներով:

Եզրակացություն

Ամփոփելով գիտական հոդվածի շրջանակում իրականցված ուսումնասիրությունների արդյունքները՝ կարելի է փաստել, որ հետսառպատերազմյան ժամանակաշրջանը դարձավ ԱՄՆ արտաքին քաղաքականության վերաձևավորման և վերահիմաստավորման հիմնական պատճառը: Պաշտոնական Վաշինգտոնի արտաքին քաղաքականության ռազմավարությունում տեղի ունեցան արմատական փոփոխություններ, այն սկսեց մշակվել տնտեսական գործոնի անմիջական ազդեցության ներքո, ռազմական գործոնը զիջեց իր դիրքերը: ԱՄՆ-ն, իր տնտեսակենտրոն արտաքին քաղաքականության համատեքստում կարևորելով տնտեսության զարգացման, ժողովրդավարական արժեքների ամրապնդման ու տարածման և պետության անվտանգային երաշխիքների ձեռքբերման հանգամանքները, միջազգային հարաբերությունների համակարգում շարունակեց հավատարիմ մնալ հարաբերական չեզոքության ու միջամտողականության սկզբունքներին՝ գործնական քայլեր ձեռնարկելիս առաջնորդվելով սեփական պահանջներով ու քաղաքական ընտրանքներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Agreement on the Establishment of a Joint Warning Center for the Exchange of Information on Missile Launches and Early Warning, June 4, 2000, https://clintonwhitehouse5.archives.gov/WH/New/Europe-0005/factsheets/fs--joint-warning-center.html. Accessed: 01 February 2023.
2. Boys, James D.. *Clinton's Grand Strategy: U.S. Foreign Policy in a Post Cold War World*, Bloomsbury Academic, April 23 2015.
3. Cameron, Fraser. *US Foreign Policy After the Cold War: Global Hegemon or Reluctant Sheriff*, Routledge, September 29, 2002.
4. Clinton - Inaugural Address [January 20, 1993], Clinton Digital Library, https://clinton.presidentiallibraries.us/items/show/48462. Accessed: 20 January 2023.
5. Dittmer, Lowell. *Chinese Human Rights and American Foreign Policy: A Realist Approach*, Cambridge University Press, 2001.
6. Gill, Marcella B.. "Comparing the Foreign Policy Doctrines of Bill Clinton and George W. Bush", University of Leicester, April 14, 2017, pp. 1-15, https://www.e-ir.info/pdf/67979 . Accessed: 03 January 2023.
7. Hua, Jonathan H.. "Clintonian Policy in a Changing World", *Cornell Policy Review,* http://www.cornellpolicyreview.com/clintons-war/?pdf=2125.
8. Joint statement by the presidents of the United States of America and the Russian Federation on principles of strategic stability, June 4, 2000, https://clintonwhitehouse5.archives.gov/WH/New/Europe-0005/factsheets/js--strategic-stability.html. Accessed: 01 February 2023.
9. Lake, Anthony. *From Containment to Enlargement: Remarks of Anthony Lake*, Executive Office of the President, 1993.
10. National Economic Council, https://www.whitehouse.gov/nec/. Accessed: 20 January 2023.
11. Powaski, Ronald E.. *Ideals, Interests, and U.S. Foreign Policy from George H. W. Bush to Donald Trump*, Palgrave Macmillan, September 24, 2018.
12. Remarks by the President on Foreign Policy, U. S. Department of State ARCHIVE, February 26, 1999, https://19972001.state.gov/global/general_foreign_policy/990226_clinton.html. Accessed: 01 January 2023.
13. Remarks to Kosovo International Security Force Troops in Skopje, The American Presidency Project, June 22, 1999, https://www.presidency.ucsb.edu/documents/remarks-kosovo-international-security-force-troops-skopje. Accessed: 20 January 2023.
14. Rwandan Genocide, HISTORY, April 19, 2022, https://www.history.com/topics/africa/rwandan-genocide. Accessed: 02 April 2023.
15. The Lisbon Protocol At a Glance, Arms Control Association, December 2020, https://www.armscontrol.org/node/3289. Accessed: 01 February 2023.
16. The White House, *"A National Security Strategy for a New Century"*, December 1999, https://history.defense.gov/Portals/70/Documents/nss/nss1999.pdf?ver=SLo909OTm5lAh0LQWBrRHw%3d%3d. Accessed: 24 January 2023.
17. ---, *"A National Security Strategy of Engagement and Enlargement"*, July 1994, https://history.defense.gov/Portals/70/Documents/nss/nss1994.pdf?ver=YPdbuschbfpPz3tyQQxaLg%3d%3d. Accessed: 20 January 2023.
18. ---, *"National Security Policy for a Global Age*", December, 2000, https://history.defense.gov/Portals/70/Documents/nss/nss2000.pdf. Accessed: 26 March 2023.

19. ---, *"National Security Strategy of the United States"*, August, 1991, https://history.defense.gov/Portals/70/Documents/nss/nss1991.pdf?ver=3sIpLiQwmknO-RplyPeAHw%3d%3d. Accessed: 23 March 2023.

MAIN PECULIARITIES OF USA FOREIGN POLICY DURING POST-COLD WAR PERIOD (1991-2000)

ARMINE ALAVERDYAN
Yerevan State University,
Department of International Relations,
Chair of the International Relations and Diplomacy
Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia

The termination of the Cold War and the subsequent collapse of the Soviet Union marked a significant shift in the international relations system, which prompted the United States, as a dominant global power, to address the pressing need to develop and implement new foreign policy strategies and concepts.

The primary objective of this article is to conduct a comprehensive analysis of the primary characteristics of the US foreign policy during the Post-Cold War period, with a particular focus on the period between 1991 and 2000.

To accomplish the stated objective, this study seeks to comprehensively investigate the central characteristics and factors of the foreign policy approach adopted by the US government in the international relations system after the Cold War. This involves an in-depth analysis of the foreign policy positions and approaches of the first US President of the post-Cold War period, Bill Clinton.

The research was carried out by combining qualitative, inductive and analytical methods, a content analysis of state – strategic documents, contracts, political statements and speeches was carried out.

It was argued that with the end of the Cold War and the collapse of the Soviet Union, the official Washington foreign policy underwent key changes, the United States began to act in the international relations system with an economic – centered foreign policy strategy, adopting new goals and principles in accordance with the requirements and conditions of the time.

In conclusion, the termination of the Cold War and the subsequent collapse of the Soviet Union triggered a fundamental reshaping of the foreign policy of the United States. Notably, the economic factor supplanted the military factor in assuming the dominant position in the development and articulation of the official foreign policy strategy of Washington, thus attaining unprecedented significance and importance. The representatives of the White House, in pursuit of a strategy that intertwined economic, political and security objectives, maintained a traditional posture in the international relations system, characterized by a relative neutrality and a degree of interventionism. This approach was aligned with the visible interests, concerns and objectives of the official Washington.

Key words: *Cold War, USSR, foreign policy, democracy, globalization, economy. Interventionism.*

ОСНОВНЫЕ ОСОБЕННОСТИ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ США В ПЕРИОД ПОСЛЕ ХОЛОДНОЙ ВОЙНЫ (1991-2000 гг.)

АРМИНЕ АЛАВЕРДЯН
соискатель кафедры международных отношений и дипломатии факультета международных отношений Ереванского государственного университета, г. Ереван, Республика Армения

С окончанием холодной войны и распадом Советского Союза система международных отношений вступила в новый период становления и развития, а США, как сверхдержава, столкнулись с проблемой разработки и реализации новой внешнеполитической стратегии и концепций.

Цель данной статьи – исследовать и всесторонне представить основные черты внешней политики США в период после окончания холодной войны (особенно в 1991-2000 гг.).

Для достижения цели статьи была поставлена задача всесторонне изучить ключевые характеристики и факторы внешнеполитической стратегии, принятой официальным Вашингтоном в системе международных отношений после окончания холодной войны, подробно рассмотрев внешнеполитические позиции и подходы первого после периода холодной войны президента США Билла Клинтона.

Исследование проводилось путем сочетания качественного, индуктивного и аналитического методов, проводился контент-анализ государственно-стратегических документов, договоров, политических заявлений и выступлений.

Было обосновано, что с окончанием холодной войны и распадом СССР официальная внешняя политика Вашингтона претерпела ключевые изменения. США стали действовать в системе международных отношений с экономикоцентричной внешнеполитической стратегией, принимая новые цели и принципы в соответствии с требованиями и условиями времени.

Вывод состоит в том, что окончание холодной войны и распад СССР привели к переформированию внешней политики США – экономический фактор вместо военного занял лидирующие позиции в процессах выработки и определения внешней политики, получив бесспорную важность и значение. Представители Белого дома, совмещая экономические, политические и другие цели в области безопасности, в условиях относительного нейтралитета и интервенционизма в системе международных отношений продолжали традиционно действовать в условиях наличия видимых интересов и озабоченностей официального Вашингтона.

Ключевые слова: *Холодная война, СССР, внешняя политика, демократия, глобализация, экономика, интервенционизм.*